Գ 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԱՊՁԲ-17/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15

N 11/ 168 - 2017

ք. Երևան «25» «05» 2017թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ» /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2. Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից, մատակարարումը իրականացվում է վեց ամսվա ընթացքում՝ մինչև 2017թ-ի սեպտեմբերի 30-ը:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **2 150 190,0 (երկու միլիոն հարյուր հիսուն հազար հարյուր իննսուն)** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/[1] Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ ք.Երևան, Նալբանդյան104 ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն Հ/h 900011301075 ՀՎՀՀ 01507079	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/h 1930000521940100 ՀՎՀՀ 00433863
Տնօրենի տեղակալ	Տնօրեն
Ա. Հակոբյան	Ե. Սարգսյան

Հավելված N 1
<< 25 >> << 05 >> 2017 թ. կնքված
N 11/168-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Չափ-նի հ/հ	Կոդեր	Ապրանքի անվանումը	Չ/մ	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ
27	33411110/1/4/5	Լայֆ ՍԹԴ	տուփ	Ատամնաբուժական նյութ Լայֆ ՍԹԴ կամ համարժեք 24 գ, հիդրո կալցիի հիմքի վրա պատրաստված ռենտգենաթափանց կոշտ նյութ, որը նախատեսված է կուլտիայի ծածկման համար, ինչպես նաև որպես տակդիր-ցեմենտ բոլոր տեսակի պլոմբանյութերի համար, աշխատանքային 23C 50% խոնավության դեպքում 6 րոպե վերջնական քարացման համար, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
28	33411120/1/4/5	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	տուփ	Ատամնաբուժական պլոմբանյութ Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ կամ համարժեք , 26 գրամ պարունակությամբ, EA2, EA3, EA3.5, EB2, T1 գույներով, ինչպես նաև բոնդ 5մլ, օրթոֆոսֆորական թթու 2x3գ, ոչ օրգանական համդրիչները միջինում կազմում են 0,4մկմ, բոլոր գույները հանդիսանում են ոչ ռենտգենափաթանց, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
29	33411130/1/4/5	Փրեմիս սիրինջ	տուփ	Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը՝ 1.4-1.6%, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
30	33411160/1/4/5	Սվիստեք բոնդ	տուփ	Սվիստեք բոնդ 5մլ:Ատամնաբուժական սոսինձ-նյութ 5 մլ շշով, էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով, Շվեյցարիայի արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
31	33411170/1/4/5	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	տուփ	Ֆիլթեկ ուլտիմեյթ 48գ կամ համարժեք :Ատամնաբուժական նանոհիբրիդ պլոմբանյութ 48գ, որը իր մեջ պարունակում է գույներ DA2, DA3, DB3, Body A2, A3, A3,5,B2, EA1, EA3, EW, ինչպես նաև AT, կոմպլեկտն իր մեջ պարունակում է նաև սկավառակ, որ ցույց է տալիս, թե յուրաքանչյուր գույնը որ գույների հետ կարելի է համադրել, եզակի պլոմպանյութ է, քանի որ պարունակում է 4 տարբեր տեսակիշերտեր, նանոկրիստալների չափերը 0.6-20մկմ է, ոչ օրգանական խտանյութի պարունակությունը 72.5% է, քաշը 55.6%-ը, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
32	33411180/1/4/5	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	տուփ	Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը, այն իր մեջ պարունակում է EA2, EA3, EA3.5 EB2, DA2, DA3, DA3.5 TC, ինչպես նաև Օփթի բոնդ պրայմեր 5մլ և Օփթիբոնդ ադհեսիվ 5մլ, հղման սկավառակների կոմպլեկտ, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
33	33411190/1/4/5	Հերկուլայթ Գեներալ Կիթ	տուփ	Հերկուլայթ Գեներալ Կիթ Ատամնաբուժությունում օգտագործվող պլոմբանյութ, այն իր մեջ պարունակում է էմալի գույներ A1,A2,A3,A3.5,A4,B1,B2,B3,-B4,C1,C2,C3,C4,D2,D3,-D4,դենտինի գույներ A2,A3,A3.5,B1,B2,C2,D2, Իտալիայի արտադրության: Հանձման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշումով:
34	33411200/1/4/5	Խարիզմա օպալ 24,0	տուփ	Խարիզմա օպալ 24 գ նանոհիբրիդ պլոմբանյութ նախատեսված ատամների վերականգնման համար, հավաքածուն ունի ունի էմալայինA2,A3,A3.5, դենտինային B2,CO,OM գույներ և բոնդ 4մլ,թթու 2x2.5մլ , որը հնարավորություն է այն օգտագործել բազմաբնույթ հնարավորություններով, Գերմանիայի արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:

35	33411210/1/4/5	Փաստե ֆիլերս	տուփ	Արմատախողովակները լիցքանյութով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
37	33411230/1/4/5	Զետապլյուս L կիթ C-սիլիկոն	տուփ	Զետապլյուս L կիթ C- սիլիկոն կամ համարժեքը , այն ներառում է Զետապլյուս 200մլ առաջին շերտ,Օարանվաշ L 40մլ երկրորդ շերտ, 60մլ ակտիվատոր, խառնելու ժամանակը 30վրկ, մշակման ժամանակ 1,15րոպե, դեֆորմացիան 2-5%, վերակականգնելիությունը 98%, առաջին շերտի գույնը կանաչ, երկրորդ շերտի գույնը նարնջագույն, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
40	33411260/1/4/5	Սուիսթեք ցե-սիլ փութթի	տուփ	Սուիսթեք ցե-սիլ փութթի 910մլ կամ համարժեք, այն իր մեջ ներառում է ինչպես Տ դասի այնպես էլ Ա դասի չափսանյութերի բոլոր առավելությունները, պահում է իր ստաբիլությունը նույնիսկ 7 օր հետո, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
42	33411280/1/4/5	Զետաֆլո կոմպլեկտ	տուփ	Զետաֆլո կոմպլեկտ Ատամնաբուժական չափսանյութ Զետաֆլու փութթի 900մլ առաջին շերտով,երկրորդ շերտ լայթ 140 մլ և 60մլ ունիվերսալ ակտիվատորով, այն իր մեջ ներառում է ինչպես Տ դասի այնպես էլ Ա դասի չափսանյութերի բոլոր առավելությունները, պահում է իր ստաբիլությունը նույնիսկ 7 օր հետո, Իտալիայի արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
44	33411300/1/4/5	Թութքլինինգ բրաշիս նատուրալ	տուփ	Թութքլինինգ բրաշիս նատուրալ կամ համարժեք Փայլեցնող խոզանակներ բնական մազերով , եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
45	33411340/1/4/5	Գութա փերչա սլայդս	տուփ	Գութա փերչա սլայդս կամ համարժեք Ատամնաբուժական գուտապերչա, արմատները մշտական լիցք անելու համար, 120 հատ տուփի պարունակությամբ, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
47	33411380/1/4/5	Լիզոֆորմին 3000 1000մլ	տուփ	Լիզոֆորմին 3000 1000մլ կամ համարժեք ախտահանիչ հեղուկ, միջոցը երկնագույն, թափանցիկ, թույլ հոտով խտանյութ է, որպես ազդող նյութ միջոցի կազմի մեջ մտնում ենգլուտարային ալդեհիտ 9,5%, գլիօքսալ 7.5%, դիդեցիլդիմեթիլամքոնումի քլորիդ 9.6% և այլ բաղադրամասեր 6% և այլն, մջջոցը հաատեսված է բժշկական սարքերի, սարքավորումների ինչպես նաև գործիքների մակերեսային և ընդհանուր ախտահանման համար, լուծույթի աշատանքային պիտանելության ժամկետը 14 օր է, խտանյութը կախված օգտագործման նպատակից ունի բացման տարբեր չափաբաժիններ, որը նշված է նյութի տեխ. Բնութագրում, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
49	33411410/1/4/5	Էնդոֆիլ + էվգենոլ	տուփ	Էնդոֆիլ + էվգենոլ Ատամնաբուժական ռենտգենաթափանց լիցքանյութ Էնդոմետազոն +էվգենոլ 15գ փոշի+15մլ հեղուկ էվգենոլ դեքսամետազոնի հիմքի վրա, փոշին պարունակում է 22.5 իմոլա յոդին, 2.2կիսակսիմետալին, Շվեյցարիայի արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
50	33411420/1/4/5	Կանալոլցիչներ N4	տուփ	Արմատախողովակները լիցքանյութով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ , հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
51	33411430/1/4/5	Կ-ֆայլ 15-40 N6	տուփ	Արմատախողովակների լայնացման գործիքներ Կ ֆայլ 6 հատ տուփի մեջ, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով
52	33411450/1/4/2	Հեմոստատիկ 30մլ	հատ	Հեմոստատիկ 30մլ կամ համարժեք արյունը կանգնեցնող, ցավազրկող հեղուկ, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
54	33141127/1/4/5	Ներծծող հեմոստատիկ նյութեր	տուփ	Ալվեոպաստա 15գ կամ համարժեք: Յոդոֆորմի մածուկ անտիսեպտիկ վերամշակման համար, որը ցավազրկում է և փակում է հեռացված ատամի խոռոչը: Պարունակում է էթիլամինոբենզոտ 26,3%, յոդոֆորմ 16.3%, էվգենոլ 13.6%, անանուխիյուղ 7.8%, տուփի պարունակությունը 15գ, Շվեցարական կամ համարժեք արտադրության,հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
55	33411470/1/4/5	Պրեմիս	տուփ	Ատամնաբուժական պլոմբանյութ պրեմիս կամ համարժեքը, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը՝1.4 – 1.6%, այն իր մեջ պարունակում է EA, EA3, DA2, ինչպես նաև Օփթի բոնդ սոլո պլուս 5մլ, որն էլ իր մեջ պարունակում է 15% լցանյութ , որը տալիս է 0.4 միկրոն բարիային ապակի, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
56	33411480/1/4/5	Վերտիս ֆլոու	տուփ	Վերտիս ֆլոու կամ համարժեք հեղուկ պլոմբանյութ 2գ պարունակությամբ, օգտագործման ժամանակ չի պահանջվում ոչ ադգեզիա, ոչ էլ թթվի օգտագործում, այդ ամենը այն պարունակում է 1 կոմպոնենտում, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
57	33411500/1/4/5	Աէրոդեզին 1000մլ	տուփ	Աէրոդեզին 1000մլ մակերեսների ախտահանման հեղուկ, նախատեսված է տուբերկուլոզի, հեպատիտ ցե և բ-ի, ՁԻԱՀ-ի և մի

				շարք այլ վիրուսների ոչնչացման համար, շատ հեշտ է օգտագործել, չի փչացնում մակերեսները, Գերմանիայի արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
58	33411510/1/4/5	Մաքցեմ էլիտ	տուփ	Մաքցեմ էլիտ երկակի կարծրացման կոմպոզիտային ցեմենտ ՝ 5,0 ներարկիչ թափանցիկ գույնով և 5,0 ստանդարտ խառնիչ,ծայրադիրներ կամ համարժեք, որը նախատեսված է կերամիկական, կոմպոզիտային, մետաղական կոնստրուկցիաների ֆիքսացիայի համար, այն չի պահանջում թթվային մշակում և ադգեզիա, այն պարունակվում է ցեմենտի մեջ, այն նախատեսված է նաև վինիրների ֆիքսացիայի համար, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
59	33411520/1/4/5	Ֆյուջի պլյուս	տուփ	Ֆյուջի պլյուս A3 կամ համարժեք կոմպոզիտային ապակեիոնոմերային ցեմենտ, որն իր մեջ պարունակում է 15գ փոշի, 8գ հեղուկ, ինչպես նաև 7գ կոնդիցիոներ, որն էլ իր հերթին ի տարբերություն այլ ցեմենտների ապահովում է ավելի արագ և ավելի ամուր կպչունություն, , ճապոնական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:
61	33411570/1/4/5	3M ESPE բոնդ	տուփ	3M ESPE բոնդ 2 6գ կամ համարժեք, այն համալրված է լրացուցիչ նանոմասնիկների համդրությամբ, որը հնարավորություն է տալիս որպեսզի ադհեսիվը ավելի լավ թափանցվի դենտինային շերտի մեջ, միաժամանակ ապահովելով ի տարբերություն այլ ադհեսիվների հնարավորինս բարակ շերտ, այն աշխատանքային բոլոր փուլերում պահպանում է թափանցիկ գույն, ԱՄՆ արտադրության կամ համարժեք, հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշումով:

Ծ անոթություն

* 2,5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետ առնվազն 2/3-րդը, իսկ առանձին դեպքերում (հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման դեպքերում) դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-րդը:
**Ապահովել դեղերի տեղափոխման և պահպանման պայմանները ՀՀ առողջապահության նախարարի 09.09.2010թ. N17-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:
Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930000521940100
ՀՎՀՀ 00433863

Տնօրեն

Ե. Սարգսյան

Հավելված N 2
«25» «05» 2017թ. կնքված
,N 11/168-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափ-նի համարը	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	II եռամսյակ		III եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
27	Լայֆ ՍԹԴ	տուփ	8800,00	0	0,00	3	26400,00	3	26400,0
28	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	տուփ	79000,00	0	0,00	2	158000,00	2	158000,0
29	Փրեմիս սիրինջ	տուփ	39800,00	0	0,00	2	79600,00	2	79600,0
30	Սվիստեք բոնդ	տուփ	8200,00	0	0,00	1	8200,00	1	8200,0
31	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	տուփ	220000,00	0	0,00	1	220000,00	1	220000,0
32	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	տուփ	155000,00	0	0,00	1	155000,00	1	155000,0
33	Հերկուլայթ Գեներալ Կիթ	տուփ	185000,00	0	0,00	1	185000,00	1	185000,0
34	Խարիզմա օպալ 24,0	տուփ	130000,00	0	0,00	1	130000,00	1	130000,0
35	Փաստե ֆիլերս	տուփ	1200,00	0	0,00	60	72000,00	60	72000,0
37	Զետապլյուս L կիթ C- սիլիկոն	տուփ	6600,00	0	0,00	2	13200,00	2	13200,0
40	Սուիսթեք ցե-սիլ փութթի	տուփ	11000,00	0	0,00	1	11000,00	1	11000,0
42	Զետաֆլո կոմպլեկտ	տուփ	14300,00	0	0,00	2	28600,00	2	28600,0
44	Թուքլինինգ բրաշիս նատուրալ	տուփ	600,00	300	180000,0	0	0,00	300	180000,0
45	Գութա փերչա սլայդս	տուփ	1090,00	0	0,00	1	1090,00	1	1090,0
47	Լիզոֆորմին 3000 1000մլ	տուփ	13200,00	3	39600,0	6	79200,00	9	118800,0
49	Էնդոֆիլ + էվգենոլ	տուփ	15200,00	0	0,00	6	91200,00	6	91200,0
50	Կանալոցիչներ N4	տուփ	1120,00	0	0,00	50	56000,00	50	56000,0
51	Կ-ֆայլ 15-40 N6	տուփ	935,00	0	0,00	20	18700,00	20	18700,0
52	Հեմոստատիկ 30մլ	հատ	8800,00	0	0,00	3	26400,00	3	26400,0
54	Ներծծող հեմոստատիկ նյութեր	տուփ	13500,00	0	0,00	2	27000,00	2	27000,0
55	Պրեմիս	տուփ	39800,00	0	0,00	2	79600,00	2	79600,0
56	Վերտիս ֆլոու	տուփ	15000,00	0	0,00	2	30000,00	2	30000,0
57	Աէրոդեզին 1000մլ	տուփ	8100,00	0	0,00	4	32400,00	4	32400,0
58	Մաքցեմ էլիտ	տուփ	26000,00	0	0,00	3	78000,00	3	78000,0
59	Ֆյուջի պլյուս	տուփ	45000,00	2	90000,0	4	180000,00	6	270000,0
61	3M ESPE բոնդ	տուփ	27000,00	0	0,00	2	54000,00	2	54000,0
Ընդամենը				X	309600,0	X	1840590,0	X	2150190,0

Ծ անոթություն՝ Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:
Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930000521940100
ՀՎՀՀ 00433863
Տնօրեն

Ե. Սարգսյան

Հավելված N 3
«25» «05» 2017թ. կնքված
N 11/1168-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ»

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդորում										
		Մարտ %	Ապրիլ %	Մայիս %	Հունիս %	Հուլիս %	Օգոստոս %	Սեպտեմբեր %	Հոկտեմբեր %	Նոյեմբեր %	Դեկտեմբեր %	Ընդամենը Տարի
27	Լայֆ ՍԹԴ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
28	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
29	Փրեմիս սիրինջ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
30	Սվիստեք բոնդ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
31	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
32	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
33	Հերկուլայթ Գեներալ Կիթ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
34	Խարիզմա օպալ 24,0	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
35	Փաստե ֆիլերս	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
37	Զետապլյուս L կիթ C-սիլիկոն	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
40	Սուիսթեք ցե-սիլ փութթի	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
42	Զետաֆլո կոմպլեկտ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
44	Թութքլինինգ բրաշիս նատուրալ	0	0	100.00	100.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
45	Գութա փերչա սլայդս	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
47	Լիզոֆորմին 3000 1000մլ	0	0	33.33	33.33	100.00	100.00	100.00	100	100	100	100%
49	Էնդոֆիլ + էվգենոլ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
50	Կանալոցիչներ N4	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
51	Կ-ֆայլ 15-40 N6	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
52	Հեմոստատիկ 30մլ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
54	Ներծծող հեմոստատիկ նյութեր	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
55	Պրեմիս	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
56	Վերտիս ֆլոու	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
57	Աէրոդեզին 1000մլ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%
58	Մաքցեմ էլիտ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%

59	Ֆյուջի պլյուս	0	0	33.33	33.33	100.00	100.00	100.00	100	100	100	100%
61	3M ESPE բոնդ	0	0	0.00	0.00	100.00	100.00	100.00	100	100	100	100%

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930000521940100
ՀՎՀՀ 00433863

Տնօրեն

Ե. Սարգսյան

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն